Ինձ վրայ խիստ դառն տպաւորութիւն գործեց, որ քրդի ոտքը անցնում էր մինչեւ անգամ քրիստոնէական սրբարանի շեմքից, եւ նա միջամտութիւն էր գործում եկեղեցականի տնտեսութեան մէջ:

Մինչ ինձ խռովում էր այս մտածութիւնը, զգացի, որ իմ ետեւից մէկը հանդարտ կերպով փէշս քաշեց: Շուռ եկայ, տեսնեմ՝ Սօնան կանգնած էր իմ մօտ, խօսում էր Մարօի հետ: Բազմութիւնն այնքան սեղմուած էր մինը միւսի վրայ, որ Սօնայի արարմունքը մնաց աննկատելի: Նա իր յօնքի շարժմունքով նշան տուեց եւ շարունակեց խօսել Մարօի հետ: Ես հասկացայ. նա ինձ զգուշացրուց, որքան կարելի է ինձ հեռու պահեմ նրանից, որովհետեւ նրա մօտ կանգնած էր իր մօրաքոյրը: Ի՞նչ էր նշանակում այդ:

Բայց ես չկարողացայ առանց հիացմունքի տեսնել նրա տխուր եւ գունաթափ դէմքը, որ իր դալկութեան մէջ աւելի գեղեցիկ էր:

— Ասում են, սարիցը մի ճգնաւոր են բռնել, — խօսում էր Սօնան :

— Ես էլ լսեցի, — պատասխանեց Մարօն: — Ասում են, բերել են վանքը, գցել են մէկ խուցի մէջ, դուռը փակել են, միւս օրը գնացել են, դուռը բաց են արել, տեսել են ճգնաւորը խափանուել է: Հիմա չեն իմանում արդեօք ճգնաւո՞ր էր, թէ սատանայ:

— Մեղք է, այդպէս չեն խօսի, Մարօ, — ասաց Սօնան: — Սատանան ո՞րն է. ախար ճգնաւորն էլ խափանւում է. տեսնում ես, աչքիդ առջեւ կանգնած է, մէկ էլ տեսար՝ էլ չկայ:

— Ասում են, այստեղ մի այդպիսի վարդապետ կայ, այնտեղ սարումը ճգնում է, որը երբեմն երեւում է, իսկ երբեմն աներեւոյթ է լինում, — մէջ մտաւ Սօնայի մօրաքոյրը:

— Գնանք տեսնենք, — ասաց Մարօն:

— Ես կը վախենամ, — պատասխանեց Սօնան:

— Վա՛, ճգնաւորն էլ մարդ է, խօ դեւ չէ, ինչո՞ւ ես վախենում, — ասաց Մարօն:

— Ես մեր Ստեփանիցն էլ վախեցայ, հէնց որ տեսայ՝ նա նստած էր «խեղճերի» մէջ:

Քոյրը վախենում էր եղբօրից, որոնք միասին մեծացել էին, որոնք հազար անգամ համբուրուել էին. վախենում էր, որովհետեւ եղբայրն այժմ գտնւում էր այն հասարակութեան մէջ, որոնք ոգիների հետ հաղորդակցութիւն ունէին...